

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

20 հոկտեմբերի 2023թ.
ք.Երևան

N 72-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԹԻՎ 2 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի 2023 թվականի սեպտեմբերի 22-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով գրությամբ ներկայացրած միջնորդությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 22-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվել է գրություն, որով միջնորդել է՝ թիվ 2/47 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Սոնա Սուքիասյանի, հանձնաժողովի քարտուղար Աննա Սաքեյանի և հանձնաժողովի անդամ Լաուրա Սաֆարյանի, թիվ 2/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արուսյակ Բեգլարյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ:

2. Թիվ 2/47 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Լաուրա Սաֆարյանը Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների քվեարկության օրն իր հերթափոխին, երբ հանդիսացել է ինքնասուսնծվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամը, քվեարկության ծրարի կտրվածքի միջով ինքնասուսնծվող դրոշմանիշը քվեաթերթիկին փակցնելուց հետո իր անհատական կնիքով կնքել է քվեարկության ծրարները, որից հետո ընտրողին հնարավորություն է ընձեռել քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ:

Թիվ 2/47 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Սոնա Սուքիասյանի և հանձնաժողովի քարտուղար Աննա Սաքեյանի կողմից նշված հանգամանքը բացահայտվել և կանխվել է մոտ 3 տասնյակ քվեարկության ծրար կնքելուց հետո: Տեղամասային ընտրական հանձնաժողովը կնքված քվեարկության ծրարներում գտնվող քվեաթերթիկները գնահատել և հաշվարկել է որպես անվավեր քվեաթերթիկներ:

Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել թիվ 2/47 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու համար: Վերահաշվարկի արդյունքում՝ կնքված քվեարկության ծրարի հիմքով անվավեր ճանաչված բոլոր քվեա-

թերթիկները համարվել են վավեր և հաշվարկվել որպես համապատասխան կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկած քվեաթերթիկներ:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 67-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է.

«7. Քվեարկելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է քվեատուփի մոտ ինքնասուսնծվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին և նրան է հանձնում քվեարկության կտրոնը: Հանձնաժողովի անդամն ստուգում է կտրոնը, իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել նաև ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը: Հանձնաժողովի անդամն առանց քվեարկության ծրարն ընտրողից վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնասուսնծվող դրոշմանիշը, որից հետո բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ (...):»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստում է, որ թույլ է տրվել Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 7-րդ մասի խախտում և գտնում է, որ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի միջնորդությունը՝ թիվ 2/47 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Սոնա Սուքիասյանի, հանձնաժողովի քարտուղար Աննա Սաքեյանի և հանձնաժողովի անդամ Լաուրա Սաֆարյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, ենթակա է բավարարման:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 2/47 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Սոնա Սուքիասյանը, հանձնաժողովի քարտուղար Աննա Սաքեյանը և հանձնաժողովի անդամ Լաուրա Սաֆարյանը պատշաճ ծանուցվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 15:00-ի նիստի մասին: Նիստին ներկայացել էին թիվ 2/47 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Սոնա Սուքիասյանը և հանձնաժողովի քարտուղար Աննա Սաքեյանը: Վերջիններս Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում հաստատեցին, որ հանձնաժողովի անդամ Լաուրա Սաֆարյանն ինքնասուսնծվող դրոշմանիշը քվեաթերթիկին փակցնելուց հետո իր անհատական կնիքով կնքել է քվեարկության ծրարները:

3. Թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացվել է միջնորդություն թիվ 2/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արուսյակ Բեգլարյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ և, որպես փաստական հանգամանք նշվել է. «թիվ 2/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի աշխատանքները կազմակերպել է ոչ պատշաճ, որը չի ազդել քվեարկության արդյունքների վրա:»:

Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետը սահմանում է.

«21) ուժը կորցրած է ճանաչում ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը, եթե համապատասխան որակավորման վկայական ստացած անձի կողմից խախտվել են սույն օրենսգրքի պահանջները.»:

Սույն վարչական վարույթի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ 2/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի՝ քվեարկության օրվա՝ 2023 թվականի սեպտեմբերի 17-ի տեսաձայնագրությունը: Ուսումնասիրության արդյունքում քվեարկության բնականոն ընթացքի և հանձնաժողովի բնականոն աշխատանքի «ոչ պատշաճ» կազմակերպման հետ կապված փաստական հանգամանքներ չեն հայտնաբերվել:

Սույն վարչական վարույթի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է նաև թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» N 8-Ա որոշումը և պարզել է, որ այն պարունակում է Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների քվեարկության օրը կատարված հետևյալ գրառումները. «1) Քվեաթերթիկների սեղանի տակ գրված «քվեաթերթիկ 1» և «քվեաթերթիկ 2» գրությունները, հեռացվել են ժամը 17:00-ի դրությամբ:» և «2) «Քվեարկողների ցուցակները գտնվում են բարձր և դժվար դիտելի վայրում:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 2/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արուսյակ Բեգլարյանը պատշաճ ծանուցվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 15:00-ի նիստի մասին: Նիստին ներկայացել էր թիվ 2/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արուսյակ Բեգլարյանը, ով հայտնեց, որ 2/24 ընտրական տեղամասում քվեարկությունն անցել է առանց միջադեպերի, քվեարկության ընթացքում ապահովվել է Ընտրական օրենսգրքով նախատեսված պահանջների կատարումը և տեղամասային կենտրոնում պահել է անհրաժեշտ կարգ ու կանոն:

տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի աշխատանքները կազմակերպել է ոչ պատշաճ, որը չի ազդել քվեարկության արդյունքների վրա:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի միջնորդությունը՝ թիվ 2/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արուսյակ Բեգլարյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, ենթակա է մերժման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի

51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-57-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 2/47 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Սոնա Սուքիասյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Սոնա Գարեգինի Սուքիասյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

2. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 2/47 տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղար Աննա Սաքեյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Աննա Շալիկոյի Սաքեյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

3. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 2/47 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Լաուրա Սաֆարյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Լաուրա Սարիբեկի Սաֆարյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

4. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 2/24 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արուսյակ Սերյոժայի Բեգլարյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 2 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի միջնորդությունը մերժել:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԸ**

Վ. Հովակիմյան